

ՆԵՐԱՐԿՄԱՆ ՋՈՒՐ
(տեղեկատվություն սպառողի համար)
ՆԵՐՂԻՐ-ԹԵՐԹԻԿ

Առևտրային անվանումը

ՆԵՐԱՐԿՄԱՆ ՋՈՒՐ:

Միջազգային չպատենտավորված անվանումը

Water for injection, Aqua pro injectionibus:

Չիմնական ֆիզիկաքիմիական հատկությունները

Անգույն թափանցիկ, վարակազերծ, ջերմածնազերծ հեղուկ, առանց հոտի և համի,
pH-ը՝ 5,0-ից մինչև 7,0:

Որակական ու քանակական բաղադրությունը

1 մլ պրեպարատը պարունակում է ջուր ներարկման համար 1մլ:

Թողարկման ձևը

Ներարկման ջուր 2 մլ ամպուլներով, փաթեթավորման մեջ՝ 10-ական ամպուլ:

Դեղաբանական խումբը

Լուծիչ:

Դեղաբանական ազդեցությունը

Կիրառվում է դեղագործական նպատակով, որպես կաթիլաներարկման և ներարկման վարակազերծ լուծույթների լուծիչ՝ ապահովելով դեղանյութերի և ջրի համատեղելիության և արդյունավետության օպտիմալ պայմաններ:

Ցուցումները

Որպես նոսրացնող միջոց՝ դեղափոշիներից, լիոֆիլիզատներից և խտանյութերից կաթիլաներարկման (ներարկման) վարակազերծ լուծույթներ պատրաստելու և ախտորոշիչ միջոցների համար: Կիրառվում է ե/մ, մ/մ, մ/ե և այլ վարակազերծ լուծույթներ պատրաստելու նպատակով: Արտաքին ուղիով կիրառվում է վերքերի վվացման և վիրակապերի խոնավացման համար:

Կիրառման ձևերը

Ներարկման ջրի կիրառմամբ դեղալուծույթների և ախտորոշիչ միջոցների պատրաստումն իրականացվում է վարակազերծ պայմաններում (ամպուլների բացում, ներարկչի և դեղերով տարաների ջրալցում): Յուրաքանչյուր բացված ամպուլ նախատեսված է միանվագ կիրառման համար:

Հակացուցումները

Որպես դեղերի և ախտորոշիչ միջոցների լուծիչ չի կիրառվում, եթե նախատեսված է այլ լուծիչ կիրառում:

Դեղային փոխազդեցությունը

Այլ դեղերի հետ (կաթիլաներարկման լուծույթներ, կաթիլաներարկման խտանյութեր, ներարկման լուծույթներ, լուծույթներ պատրաստելու համար դեղափոշիներ, չոր նյութեր) խառնելու դեպքում անհրաժեշտ է համատեղելիության տեսողական վերահսկում, քանի որ հնարավոր է քիմիական կամ բուժական անհամատեղելիություն:

Հատուկ հրահանգներ

Ներարկման ջուրը չի կարելի ուղղակիորեն ներարկել կամ ներմուծել կաթիլաներարկմամբ՝ ելնելով արյունալուծարման մեծ վտանգից:

Փաթեթավորումը

Միջնորդով ստվարաթղթե տուփի մեջ 10-ական ամպուլ, յուրաքանչյուր ամպուլ պարունակում է 2 մլ ներարկման ջուր:

Դեղատնից բացթողման կարգը

Դեղատոմսով:

Պահման պայմանները

Լույսից պաշտպանված, երեխաներին անհասանելի տեղում, +25°C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում:

Պիտանիության ժամկետը

4 տարի:

Արտադրող՝

«Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ, Հայաստան 0040, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք, թիվ 6:

Հեռ./ֆաքս. + (374 10) 62 74 10, հեռ.՝ 61 87 29: